



ԿԱՐԾԻՔ. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՒԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (այսուհետ՝ **Օրինագծերի փաթեթ**) ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և դրանում տեղ գտած թերթություններն ու բացթողումները.

ա) ընդհանրապես դրական ենք գնահատում իրական շահառուների հայտնաբերման, գրանցման և հաշվետվողականության մասին օրենսդրական կարգավորումների նախաձեռնումն ու իրականացման գործընթացը:

բ) այդուհանդերձ, կարծում ենք, որ այդ գործընթացը որոշակիորեն շեղվել է բուն նպատակադրումից և դարձել է փողերի լվացման գործընթացի հետ որևէ կապ չունեցող **ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ տոտալ, անհարկի, կրկնակի վերահսկողություն սահմանելու, նրանց կրկնակի/եռակի չարչարելու, անհարկի վարչական պատասխանատվության ենթարկելու, պետական բյուջե անհարկի և/կամ կրկնակի/եռակի վճարներ կատարելու կոռուպցիոն գործընթացի: Ավելին՝ Օրինագծերի փաթեթով առաջարկվող փոփոխություններով ու լրացումներով էլ ավելի է խորանում այդ միտումը:**

գ) այս պարագայում բոլորովին էլ արդյունավետ չեն դառնում փողերի լվացման մեջ շահագրգռված ու իրականացնող կազմակերպությունների խիստ հաշվառման, դրանց իրական շահառուների բացահայտման, դրանց գործողությունների կանխման, գործունեության հարապարակայանցման,

հաշվետվողականության մակարդակի բարձրացման, պետական բյուջե այդ ապօրինի միջոցների վերադարձման կարևորագույն նպատակադրումները:

դ) 2023 թ. հունվարի 1-ից սկսված իրավական շահառուների համատարած հայտարարգրման գործընթացը ցույց տվեց, որ այդ գործի պատասխանատու պետական կառավարման մարմինները բոլորովին էլ պատրաստ չէին այդ գործընթացին: Չնայած հանրային իրազեկման լավ աշխատանքին, այդուհանդերձ լուրջ բացթողումներ կային այդ գործընթացում: Այսպես,

- չգիտես իչու և ինչպես դա համատարած տարածվեց նաև ոչ առևտրային կազմակերպությունների վրա, որոնց կանոնադրական նպատակները բոլորովին էլ շահույթ ստանալը և դրա վերաբաշխումը չէ: Ընդ որում, այդ կազմակերպություններում, հատկապես՝ հասարակական կազմակերպություններում, **բոլորովին էլ առկա միջոցները և/կամ կապիտալը բաժնեմասերով չեն բաժանվում դրանց անդամների մեջ և նրանք սեփականտերեր կամ էլ իրական շահառուներ չեն հանդիսանում այդ միջոցների, այնպես, ինչպես սահմանված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքի (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենք) 9-րդ հոդվածով՝ իրավաբանական անձի պետական գրանցման, կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալը կամ հիմնադիրների, մասնակիցների, անդամների, փայատերերի, բաժնետերերի կազմը փոփոխելու դեպքում հիմնադիրները (մասնակիցները, անդամները, փայատերերը, բաժնետերերը և այլք) պարտավոր են իրավաբանական անձանց գրանցող պետական մարմին (<< ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն) ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն՝ Արդարադատության նախարարի սահմանած ձևով և կարգով:**

Հետևապես չկա **իրավական և մոտիվացնող այն հիմքը, որպեսզի այդ կազմակերպությունների միջոցներն օգտագործվեն փողերի լվացման նպատակներով:** Իհարկե քիչ չեն այն փաստերը, որ այդ կազմակերպությունների միջոցների օգտագործման ժամանակ տեղի են ունենում կոռուպցիոն գործարքներ: **Այդուհանդերձ դրանք քննարկելի կամ վերաբերելի չեն փողերի լվացման օրենսդրության շրջանակներում:** Այդ փաստերի վերահսկողությունն իրականացվում է պետական կառավարման մի քանի մարմինների միջոցով և հատկապես՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով, ինչը սկսած 2019 թ. սահմանել է ոչ առևտրային կազմակերպությունների՝ ՀԿ-ների և հիմնադրամների, հաշվետողա-կանության կուռ էլեկտրոնային համակարգ:

Հետևապես կարծում ենք, որ ՀԿ-ների ու հիմնադրամների կրկնակի հաշվետվողական համակարգի կիրառումը լրացուցիչ ծանր բեռ է դրանց համար և բարդացնում է նրանց կյանքը՝ պատճառ դառնալով այդ համակարգի համատարած ներդրման դեմ հանրային լուրջ բողոքի և հաշվետվությունների չներկայացման,

- վերոհիշյալի հետ մեկտեղ իրական շահառուների բացահայտման համակարգով նախատեսվող հայտարարագրերի ձևերը վերոհիշյալ կազմակերպությունների համար ոչ իրավաչափ են, անտեղի և խիստ մեծածավալ: Այսպես, ակնհայտ է, որ թեև այդ կազմակերպությունների գործունեության շահառուները բազմաթիվ ֆիզիկական ու իրավաբանական անձինք են, այդուհանդերձ **իրավական շահառուների դասական սահմանմանը համապատասխան նրանք չեն կարող դիտարկվել որպես իրական շահառու:**

Իրականում **իրական շահառուների դասական սահմանմամբ**, ինչը նախատեսված է 2008 թվականի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի 1-ին մասի 14-րդ կետով, **այդ կազմակերպություններում չկան այնպիսի անձինք, ովքեր կարող են համարվել իրական շահառու:**

14) **իրական շահառուն** ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետնասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

Այդուհանդերձ այդ կազմակերպությունների իրական շահառու՝ **դրա դասական սահմանմամբ**, կարելի է դիտարկել **դրա գործադիր մարմնի ղեկավարին՝ նախագահին կամ էլ՝ խորհրդի նախագահին**: Իսկ վերջիններիս մասին ողջ տեղեկատվությունը կա պետական կառավարման տարբեր մարմիններում՝ ՀՀ ՊԵԿ, իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն, ՀՀ բանկեր և այլն: **Այս պարագայում այդ կազմակերպությունների համար դժվար ընկալելի է ներկայում սահմանված հայտարարագրերում մինևույն տեղեկատվությունը կամ էլ դրանցում կատարվող փոփոխությունները ևս մեկ անգամ ներկայացնելը՝ դրանք չներկայացնելու դեպքերում վարչական պատասխանատվության ենթարկվելու և պետական բյուջե լրացուցիչ ոչ իրավաչափ վճարներ կատարելու ռիսկի սպառնալիքների ներքո,**

- միաժամանակ նշված գործընթացի ժամանակ դրա համար պատասխանատու մարմինները չկարողացան իրացնել գործող օրենսդրությամբ սահմանված կարգավորումները՝ թե՛ իրենց անպատրաստության, թե՛ իրենց արհեստավարժ մարդկային ռեսուրսների բացակայության և թե՛ օգտագործվող էլեկտրոնային համակարգի դժվար, ծանր ու ընդհատումներով աշխատանքի արդյունքում: Այսպես, գործող իրավակարգավորումներով սահմանված է, որ իրական շահառուի հայտարարագիրը կարող է ներկայացնել իր լիազորված անձը՝ ՀՀ ԱՆ կողմից սահմանված էլեկտրոնային լիազորագրի ձևը լրացնելու և սահմանված ժամկետում ներկայացնելու դեպքում: Բազմաթիվ հաշվետու կազմակերպությունների սոցիալական ցանցերում արձագանքներում նշվում էր, որ իրենց կողմից լրացված էլեկտրոնային լիազորագրերը ոչ մի կերպ չէին հասնում պատասխանատու մարմիններին, չէին գրանցվում նրանց մոտ և լիազորված անձը չէր կարողանում ներկայացնել հայտարարագիրը: Արդյունքում իրական շահառուները և/կամ նրանց լիազորված անձինք ստիպված էին լինում կապի տարբեր միջոցներով դիմել ՀՀ արդարադատության նախարարություն, դրա ենթական պատասխանատու մարմիններ՝ լիազորագրերը ընդունելու և ըստ այդմ հաշվետվություններն ընդունելու խնդրանքով: Եւ այդ գործընթացը տևում էր օրեր, շաբաթներ, անգամ՝ 1-2 ամիս շարունակ: Դրա հետ մեկտեղ վերջիններս չէին կարողանում ներկայացնել հայտարարագրերն այն պատճառով, որ այդ ժամանակահատվածում սկիզբ էր առել ՀՀ քաղաքացիների նույնականացման քարտերի փոխարինման գործընթացը, ինչի արդյունքում շատ անձինք չունենալով համապատասխան

Էլեկտրոնային ծածկագրով նույնականացմա քարտ չէին կարողանում մուտք գործել համակարգ և ներկայացնել հայտարարագրերը:

Այսպիսի բացթողումների արդյունքում շատ կազմակերպություններ ոչ իրենց մեղքով հայտնվեցին վարչական պատասխանատվության սպառնալիքի և դրանից հետևող ոչ իրավաչափ տուգանքներ վճարելու առջև:

Վերոհիշյալից հետևում են մեր հետևյալ առաջարկությունները.

- ✓ Օրինագծերի փաթեթով նախատեսել արդեն իսկ պետական կառավարման մարմիններ համապատասխան հաշվետվություններ ներկայացրած հասարակական կազմակերպություններից և հիմնադրամներից **իրական շահառուների մասին հայտարարագրերի ներկայացման պարտականության բացառում,**
- ✓ վերը նշված առաջարկությանը չհամաձայնելու դեպքում՝ հնարավորինս պարզեցնել դրանց համար նախատեսված հայտարարագրերի օրինակելի ձևերը և պահանջել դրանց ներկայացումը միմիայն նախորդիվ ներկայացված պետական գրանցման փաստաթղթերում, հաշվետվություններում և հայտարարագրերում առկա տվյալների փոփոխության դեպքում,
- ✓ այդ կազմակերպությունների համար իսպառ վերացնել հայտարարագրերի չներկայացման համար վարչական պատասխանատվության և դրանից բխող տուգանքների վճարման իրավակարգավորումները, քանզի այդ կազմակերպություններն արդեն իսկ գտնվում են այդպիսի պատասխանատվության տակ՝ **իենց գործունեության մասին ՀՀ ՊԵԿ ներկայացվող տարեկան հավետվությունների ներկայացման իրավակարգավորումների շրջանակում,**
- ✓ պարզեցնել իրական շահառուների լիազորագրերի ներկայացման կարգը,
- ✓ Էապես բարելավել իրական շահառուների մասին հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի աշխատանքը:

2. Օրինագծերի փաթեթով ներկայացված իրավական ակտերի մեջ առկա բացթողումներն ու դրանց վերացման ուղղությամբ համապատասխան առաջարկությունները.

ա) իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասում նշված է, որ. «Իրավաբանական անձի իրական շահառուի վերաբերյալ հայտարարության ձևի

ներկայացման պահանջը 2012 թվականին սահմանվել է նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի (այսուհետ սույն ենթավերնագրում՝ Օրենք) 66-րդ հոդվածի 3-րդ մասով:» Այդուհանդերձ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում (<https://www.arlis.am/>) մեր փնտրտուքը Օրենքի 66-րդ հոդվածը բացի 1-ին մասից այլ մասեր, այդ թվում՝ 3-րդ մաս, չէր պարունակում.

Հոդված 66. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակներով տրամադրվող տեղեկությունները

(վերնագիրը խմբ. 03.06.21 ՀՕ-246-Ն)

1. Գործակալությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազոր մարմին է տրամադրում պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն այդ օրենքով սահմանված կարգով:

(66-րդ հոդվածը լրաց. 17.11.16 ՀՕ-207-Ն, խմբ. 03.06.21 ՀՕ-246-Ն)

(03.06.21 [ՀՕ-246-Ն](#) օրենքն ունի անցումային դրույթ):»:

Իհարկե թեև 2012 թ. մարտի 19-ի «**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ**» **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** թիվ **ՀՕ-127-Ն օրենքով** Օրենքի նոր խմբագրության մեջ 66-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է հետևյալ իրավակարգավորումը.

«3. Իրավաբանական անձը պարտավոր է պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գործակալություն ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն: Հայտարարության մեկ օրինակը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ վերջինիս պահանջով: Իրական շահառուի վերաբերյալ հայտարարության ակնհայտ կեղծ կամ թերի ներկայացման դեպքում գործակալությունն այդ մասին հաղորդում է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ»,

այդուհանդերձ դա չի արտահայտված այսօրվա դրությամբ գործող Օրենքի ինկորպորացված տարբերակում:

Ավելին, այդ իրավակարգավորումը չի սահմանվել նաև Օրենքի հետագա բազմաթիվ փոփոխություններում ու լրացումներում և հատկապես արմատական փոփոխությունների և լրացումների մասին 03.06.2021թ.-ին ընդունված «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու

մասին» ՀՕ-246-Ն օրենքով, որն ուղղված է իրական շահառուների թափանցիկության ապահովման անհրաժեշտ կառուցակարգերի և բաց ռեգիստրի ներդրմանը:

Հետևապես առաջարկում ենք Օրինագծերի փաթեթով նախատեսել փոփոխություն և լրացում՝ Օրենքի գործող տարբերակում այդ իրավակարգավորումը լրացնելու ուղղությամբ:

բ) նույն տրամաբանությամբ գործող Օրենքում և առաջարկվող օրինագծերի փաթեթում բացակայում են պետական մասնակցությամբ ընկերությունների նկատմամբ իրական շահառուների բացահայտման, հաշվետվողականության, պատասխանատվության, վերահսկողության իրավակարգավորումները: Եւ դա այն դեպքում, երբ հասարակական ու պետական վերահսկողության համակարգերով ակնհայտ են դառնում **պետական գնումների, նպատակային վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում պետական մասնակցությամբ ընկերությունների կողմից փողերի լվացման, բյուջետային միջոցների կողոպուտի, վարկային ու դրամաշնորհային միջոցների աննպատակ կամ կոռուպցիոն նպատակներով իրականացվող բազմաթիվ՝ ՀՀ քրեական օրենսգրքին ընդդատյա, փաստեր:**

Հետևապես առաջարկում ենք, որպեսզի **Օրինագծերի փաթեթով նախատեսվեն պետական մասնակցությամբ ընկերությունների նկատմամբ իրական շահառուների բացահայտման, հաշվառման ու պատասխանատվության իրավակարգավորումներ:**

գ) իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասում նշված է նաև, որ. «Հայաստանի Հանրապետությունում **իրավաբանական անձանց իրական շահառուի բացահայտման ինստիտուտը** ներդրվել է 2008 թվականի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով... Նշված կարգավորումները նախատեսվել են՝ հիմք ընդունելով Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (այսուհետ՝ ՖԱԹՖ) հանձնարարականների պահանջները: ՖԱԹՖ-ի 24-րդ հանձնարարականով երկրներից պահանջվում է ապահովել իրավաբանական անձանց իրական շահառուների և իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց վերաբերյալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկությունների առկայությունը, որոնք կարող են ժամանակին ձեռք բերվել իրավասու մարմինների կողմից կամ հասանելի դարձվել նրանց համար:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներքո գործող իրական շահառուների բացահայտման համակարգը նախատեսում է հայտարարության ներկայացման պարտականություն **իրավաբանական անձի պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում:¹**»:

¹ Պետական գրանցման մասին օրենք, Հոդված 66(3).

Մինչդեռ գործող իրավակարգավորումներով և Օրինագծերի փաթեթով նախատեսվում է հայտարարագրի ներկայացում ամեն տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը՝ անկախ այն հանգամանքից, թե նախորդ տարում ներկայացված հայտարարգրում ներկայացված տեղեկությունների մեջ փոփոխություններ եղել են, թե՛ ոչ:

Այսպիսի իրավակարգավորումը մենք գնահատում ենք որպես կոռուպցիոն ռիսկ, ֆիզիկական ու իրավաբանական անձանց ծանրաբեռնվածության անհարկի ավելացում, վարչական պատասխանատվության ենթարկվելու լրացուցիչ ռիսկ և դրանից բխող ապօրինի ու ոչ իրավաչափ տուգանքների հավաքագրման օրենքով նախատեսված կոռուպցիոն փորձ:

Հետևապես առաջարկում ենք, որպեսզի **Օրինագծերի փաթեթով նախատեսվեն իրական շահառուների բացահայտման համակարգում հաշվետվողականության ՖԱԹՖ-ի 24-րդ հանձնարարականով սահմանված իրավակարգավորումները, այն է՝ հաշվետվությունների ներկայացում միմիայն իրական շահառուների հայտարարության ներկայացման պարտականություն իրավաբանական անձի պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում:**

դ) վերոհիշյալ տրամաբանության ներքո առաջարկում ենք **Օրինագծերի փաթեթում առավելապես հեշտացնել ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացվող հաշվետվությունների ներկայացման իրավակարգավորումները ու մեղմացնել կամ վերացնել դրանց կողմից հաշվետվությունների չներկայացման վարչական պատասխանատվության իրավակարգավորումները, հաշվի առնելով, որ այդ անձանց մոտ փողերի լվացման ռիսկերը շատ ցածր են, գործնականորեն անհնարին:**

ե) իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասում նշված է, որ. «Հայաստանի Հանրապետությունում **իրավաբանական անձանց իրական շահառուի բացահայտման ինստիտուտը** ներդրվել է 2008 թվականից՝ աստիճանաբար դրանում ներգրավելով տարբեր կազմակերպությունների և այս պահին ավարտվել է 2023 թ. հունվարի 1-ին, երբ... բոլոր իրավաբանական անձանց համար նշված պարտականությունը ծագել է 2022թ. հունվարի 1-ից, **իսկ միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների համար հայտարարագիր ներկայացնելու պարտականությունները ծագել են 2023 թվականի հունվարի 1-ից:**

Արդյունքում, 2023 թվականի հունվարի 1-ից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեն **Իրավաբանական անձանց**

պետական ռեգիստրի գործակալությունում (այսուհետ՝ Գործակալություն) գրանցման ենթակա բոլոր տեսակի իրավաբանական անձինք՝ անկախ իրավաբանական անձի կազմակերպարավական ձևից և գործունեության ոլորտից:

Ընդ որում, գործող օրենսդրությամբ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելը **հանգեցնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.29-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցների կիրառման:**

Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023 թվականի հունվարի 1-ից իրական շահառուների հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը ծագել է բոլոր իրավաբանական անձանց մոտ, այդ թվում և ոչ առևտրային կազմակերպությունների, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ **չներկայացնելու հիմքով հարուցվող վարչական վարույթներն առնվազն կրկնապատկվել են:...** Գործակալության կողմից ընդունված բոլոր որոշումները՝ կից ծանուցագրերով, ուղարկվել են հասցեատերերին, որոնց մի մասը հետ է վերադարձվել Գործակալություն՝ հասցեատերերին չհայտնաբերելու պատճառով: **Այս հսկայածավալ աշխատանքների կատարման համար ծախսվել են մարդկային և ֆինանսական մեծ ռեսուրսներ:»** (այս մեջբերման մեջ ընդգծումները մերն են):

Ելնելով այս հիմանվորումներից Օրինագծերի փաթեթի հեղինակը որոշել է, որ **իրեն ենթակա կազմակերպությունների կողմից սահմանված կառուցակարգերով իրավաբանական անձանց հաշվետվողականությունը վերահսկելու անկարողության պատճառով առաջացած վարչական վարույթների ծավալի մեծացման արդյունքում նպատակահարմար է խստացնել հաշվետվություններ կամ հայտարարգրեր չներկայացրած կազմակերպությունների նկատմամբ վարչական պատասխանատվությունը, ինչը մեր կարծիքով ոչ իրավաչափ է, ոչ օբյեկտիվ և առոչինչ, քանզի հակասում է ՀՀ սահմանադրությանը:**

Դրա փոխարեն առաջարկում ենք, որպեսզի իրավաբանական անձանց հաշվետվողականությունը վերահսկելու ուղղությամբ ՀՀ հարկատուների հաշվին ստեղծված կառուցակարգերը և գործիքները կիրառելու անկարողության, վատ շահագործման գործում մեղավոր և դրա արդյունքում ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հարուցված վարչական վարույթով հասցված վնասի համար պատասխանատու հանրային աշխատողների նկատմամբ սահմանել վարչական պատասխանատվության միջոցներ այդ թվում՝ նյութական՝

աշխատավարձերի նվազեցում, պարզևավճարներից զրկում, ոչ իրավաչափ ու առոչինչ, դատարանների վճռով վերացված, վարչական ակտերի ու վարույթների ժամանակ ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձանց կրած վնասները փոխհատուցելու, դրանց արդյունքում վերջիններիս պատճառված ոչ նյութական՝ բարոյական, վնասի, փոխհատուցման խիստ և որոշակի հստակ մեխանիզմներ

գ) Օրինագծերի փաթեթում նշված է, որ անհրաժեշտություն է առաջացել խմբագրել Օրենքի 61-րդ հոդվածը, որով նախատեսված է իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունները թղթային կրիչով դիմումը ստանալու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու վերաբերյալ դրույթը: Միաժամանակ փոփոխություն է կատարվել «Պետական տուրքի մասին» օրենքում՝ վճարովի դարձնելով նաև տեղեկատվական համակարգի միջոցով անվճար հասանելի տեղեկատվության թղթային կրիչով տրամադրումը. արդյունքում կաճեն նշված տեղեկատվության տրամադրման ծառայությունից առցանց օգտվելու ծավալները, որը համահունչ է հանրային ծառայությունների բարեփոխումների տրամաբանությանը:

Ըստ մեզ այս իրավակարգավորման տրամաբանությունը պետական բյուջե լրացուցիչ գումարների հավաքագրումն է, ինչը բոլորովին համահունչ չէ ՀՀ վարչապետի քաղաքական հայտարարությանն այն մասին, որ ՀՀ քաղաքացին տուգանքի մատերիալ չէ:

Մենք կտրականապես դեմ ենք այդպիսի իրավակարգավորմանը, քանզի գտնում ենք, որ այդ պարագայում ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձինք եռակի կարգով պետական բյուջե կատարում են վճարումներ միևնույն գործողության համար, ինչը.

- պետական կառավարման մարմինները պարտավոր են կատարել ՀՀ սահմանադրությամբ իրենց տրված լիազորությունների սահմաններում,
- այդ լիազորությունները կատարելու համար ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից՝ ընթացիկ ծախսերի, այդ թվում՝ աշխատավարձի, պարզևավճարների, համապատասխան գործիքների շահագործման ծախսերի, գրենական պիտույքների և այլ տնտեսական ծախսերի տեսքով, որոնք գոյանում են ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձանց պետական բյուջե մուծած հարկերի, տուրքերի ու պարտադիր այլ վճարներից,
- այդ գործառույթները կատարելու համար ծախսվում են վարկային և դրամաշնորհային միջոցներ, որոնց մարման պարտականությունը կրկին կրում են ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձինք,

- ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձինք արդեն իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կառուցակարգերով վճարում են համապատասխան տուրքեր հենց այդ գործողությունների համար՝ իրենց պետական գրանցման և/կամ փոփոխությունների ժամանակ:

Հետևապես առաջարկում ենք նմանատիպ փոփոխություններն ու լրացումները Օրինագծերի փաթեթից հանել: Հատկապես պահանջում ենք Օրինագծերի փաթեթի 2.4 կետով նախատեսված «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն ամբողջությամբ հանել փաթեթից:

Ամփոփելով վերոհիշյալը, թեև համաձայնվելով Օրինագծերի փաթեթով նախատեսված որոշ իրավակարգավորումների հետ, որոնք ուղղված են գործող օրենսդրության մեջ առկա վրիպակների, տարընթերցումների վերացմանն ու որոշակի հստակեցում մտցնելուն, այդուհանդերձ մեր անհամաձայնությունն ենք հայտնում առաջարկված Օրինագծերի փաթեթին և ամբողջության մեջ դեմ ենք դրան:

Դեմ ենք դրան նաև այն պատճառաբանությամբ, որ այս փաթեթի ընդունման կարևորագույն և առաջնահերթ ակնկալվող արդյունք է նշված բարձրացնել օրենսդրությամբ սահմանված կարգով իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձանց կողմից նշված հայտարարագիրը ներկայացնելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջը չկատարելու դեպքում Գործակալության կողմից օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման արդյունավետությունը:

Հետևապես առաջարկում ենք կազմակերպել Օրինագծերի փաթեթի վերաբերյալ կարծիք, դիտողություններ և առաջարկություններ ներկայացրած կազմակերպությունների ներկայացուցիչների, Օրինագծերի փաթեթի հեղինակների և ՀՀ կառավարության աշխատակազմի ներկայացուցիչների հետ մասնագիտական լայն դեմ առ դեմ քննարկում:

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ